ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТ АРМАВИРА

<< ----- >> ----------2016թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան մանկավարժներ, սիրելի դպրոցականներ և ծնողներ

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Գիտելիքի օրվա կապակցությամբ և ցանկանում, որ այս ուսումնական տարին մշտապես ուղեկցվի հաջողություններով:

Գիտելիքի օրն իսկապես տոն է կրթությունը և գիտելիքը որպես ազգային հարստություն գնահատող մեր ժողովրդի համար, և այսօր հուզված ու ոգևորված ենք բոլորս:

Սիրելի աշակերտներ, վստահաբար ձեր ձեռքերում է հայ ժողովրդի և մեր պետության ապագան: Եվ ինչ արժեքներ ու գիտելիքներ դուք կտանեք դպրոցից, դրանք կրողը կլինի մեր ապագա հասարակությունն ու պետությունը: Ահա թե ինչու է կարևոր և արդիական պահանջ ժամանակակից գիտելիքներով զինված, համաշխարհային մարտահրավերներին աչալուրջ, բազկմակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորումը:

Այդ է պատճառը, որ դպրոցը գտնվում է պետական մշտական հոգածության ներքո, որը շարունակաբար ընդլայնում է իր ծավալները և ուղղությունները:

Իրենց շնորհակալ և պատասխանատու աշխատանքում հաջողություններ եմ մաղթում մեր մանկավարժներին, ում վստահված է սերունդների կրթության և դաստիարակության դժվարին գործը. Միաժամանակ Ձեզ է վերապահված լինել կրթության և գիտության գործիչների ազգանվեր գործի շարունակողը, քանզի դպրոցաշինության ու կրթության վերելքը մեր ազգային վերածննդի, գիտության ու մշակույթի զարգացման, ազգային ինքնագիտակցության հիմքն են:

Ի սրտե շնորհավորում եմ այն մանուկներին, ովքեր այսօր առաջին անգամ են ոտք դնում դպրոց: Այսօրվանից ձեզ համար մի նոր կյանք է սկսվում՝ գիտելիքների զարմանահրաշ աշխարհի բացահայտման ժամանակաշրջանը: Իմ ջերմ

բարեմաղթանքներն եմ հղում ու ցանկանում, որ ուսումնառության ողջ ընթացքը նրանց համար լինի աշխարհաճանաչման ու ինքնադրսևորման ժամանակաշրջան:

Ցանկանում եմ, որ Գիտելիքի օրվա տոնական տրամադրությունները մշտապես ուղեկցեն ձեզ՝ նպաստելով հայրենասեր և ազգային արժեքներ կրող սերնդի դաստիարակությանը, կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, լիարժեք ու ամուր ընտանիքների և պետականության կայացմանը:

Կրկին շնորհավորելով բոլորիս Գիտելիքի ու դպրության օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին լինի առավել արդյունավետ և հագեցած նոր ձեռքբերումներով ու հաջողություններով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ